

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΠΟΛΙΤΙΣΜΟΥ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ

ΕΝΙΑΙΑ ΓΡΑΠΤΗ ΑΞΙΟΛΟΓΗΣΗ ΤΕΤΡΑΜΗΝΩΝ 2022-23

Β' ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ 13.01.2023

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ (Α' ΣΕΙΡΑ)

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Β012

ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ

ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
Ο ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΝΤΕΚΑ (11) ΣΕΛΙΔΕΣ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ (30 ՆԻՉ)**

**Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ
պատասխանեցէք հարցումներուն:**

Կեանքիդ ժամանակը ապրէ՛ այնպէս, որ այդ քաղցր պահերուն ոչ քեզի եւ ոչ ալ քու կողքիդ ապրողներուն մօտենայ ապականութիւնը: Բարին փնտռէ ամէնուրեք ու երբ զայն գտնես ու յայտնաբերես, լոյս աշխարհ բեր զայն իր թաքստոցէն եւ թող ան մնայ ազատ ու համարձակ: Գուրգուրա՛ մարդկայնութեան ամենաչնչին նշոյլին իսկ: Ամէն բանի մէջ գտիր պայծառը, այն ինչ որ հեռու կը մնայ ապականութենէ: Եթէ որեւէ մէկուն սիրտին մէջ առկայ է առաքինութիւնը, գաղտնի ու թախծալից, մազապուրծ՝ արար աշխարհի ծաղրէն ու սարսափէն, քաջալերէ՛ զայն:

Արտաքին տպաւորութիւններէն մի՛ խաբուիր, քանզի՝ այդ արժան ու վայել չէ պայծառատես աչք ու բարի սիրտ ունեցող անձի: Ոչ ոքի կամքին եղիր ենթակայ եւ ոչ մէկ ուրիշն ալ քեզի ենթարկէ: Արհամարհէ՛ չարիքն ու անազնութիւնը, բայց երբեք չար ու անազնիւ մարդիկը:

Կ՛ ուզեմ իրաւ կարգ ու կանոն մը հաստատուի: Մարդուն բարի բնութեան արժանի կարգ ու կանոն մը, որ կարենայ բարելաւել կեանքը, եւ առիթ տայ անհատին բնականոն եւ ապահով կեանք մը ապրելու, ինքզինք ըլլալու եւ բարձրանալու դէպի անմահութիւն: Կ՛ ուզեմ որ զարունը զայ իր ծաղիկներով, ամառն

ու աշունը՝ իրենց հիւթեղ միրգերով եւ ձմեռը իր ձիւնաթիւր շքեղութեամբ : Անհատը ունենայ իր գործը եւ չտառապի գործազրկութեան եւ անօթութեան մղձաւանջէն:

Կեանքիդ ժամանակը ապրէ՛ այնպէս, որ քեզի բաժին ինկած ժամերուն չաւելցնես աշխարհի թշուառութիւնն ու վիշտը, այլ՝ ժպիտով ընդունիս անոր անսահման լոյսն ու խորհուրդը:

Ուիլիըմ Սարոյեան << Ձեր Կեանքին Ժամանակը >>

Ա- Հեղինակը ի՞նչ կը գրէ ԲԱՐԻԻՆ եւ ապա ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ մասին: Գրեցե՞ք իր գաղափարները իւրաքանչիւրի մասին: Դուք կարելոր կը գտնէ՞ք իր խօսքերը: / 5 նիշ/

1 Ա

- Կը գրէ՝ բարին փնտռէ ամէնուրեք ու երբ զայն գտնես ու յայտնաբերես, ի լոյս աշխարհ բեր զայն իր թաքստոցէն եւ թող ան մնայ ազատ ու համարձակ:

- Առաքինութեան մասին կը գրէ՝ քաջալերել զայն՝ գաղտնի ու թախծալից, եթէ որեւէ մէկուն սիրտին մէջ առկայ է այն:

/ 3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ- <<Ամեն բանի մեջ գտիր պայծառը>>: Համաձայն էք գրուած այս գաղափարին: Այն այսօրուայ ընթերցողին ալ ճիշդ բան մը կը սորվեցնէ՝ Գտէք եւ գրեցէք այն նախադասութիւնը որ ցոյց կու տայ ի՞նչ է պայծառը ըստ հեղինակին: /5 նիշ/

Բ - Ինքնուրոյն պատասխան պիտի տրուի:

- Այսօրուայ ընթերցողին ալ ճիշդ բան մը կը սորվեցնէ:

- Ըստ հեղինակին պայծառ է այն՝ ինչ հեռու կը մնայ ապականութենէ:

/ 3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ- Գրողը ի՞նչ խրատ կու տայ իւրաքանչիւրին՝ իր կեանքին ժամանակը ապրելու կապակցութեամբ: Հատուածին մեջէն գտէք եւ գրեցէք երկու (2) տարբեր խրատներ: / 8 նիշ/

Գ - Կեանքիդ ժամանակը ապրէ՛ այնպէս, որ այդ քաղցր պահերուն ոչ քեզի եւ ոչ ալ քու կողքիդ ապրողներուն մօտենայ ապականութիւնը:

- Կեանքիդ ժամանակը ապրէ՛ այնպէս, որ քեզի բաժին ինկած ժամերուն չաւելցնես աշխարհի թշուառութիւնն ու վիշտը՝ այլ ժպիտով ընդունիս անոր անսահման լոյսն ու խորհուրդը:

/ 6 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ- Գտէք եւ գրեցէք այս բառերուն հոմանիշը հատուածէն: / 2 նիշ/

Լաւատես	
Խեղճութիւն	

- Դ- -Պայծառատես
- Թշուառութիւն

Ե- Հետեւեալ բառերը ճիշդ ընտրութեամբ եւ ըստ իմաստի գրեցէք ճիշդ նախադասութեան մէջ: / 10 նիշ/

Թարգմանութիւններ, գրականութիւնը, ձեռագիրներու, տպարաններ, մշակութային, բառարաններ, լուսաւորութիւն, մտաւորական, գրական, գրաբարի.

Հայ նոր _____ թափ կ'առնէ 19րդ դարուն,
 յատկապէս՝ 1860ական թուականներէն սկսեալ:
 Բայց գրական այս շարժումին նախանշանները արդէն կ'երեւին
 1750ի շուրջ: Արդարեւ այդ թուականէն եւ մինչեւ 1800՝ Վենետիկէն
 Մոսկուա եւ Հնդկաստան, ու աւելի մօտ՝ Պոլիս, Թիֆլիս, Նոր Ջուղա
 եւ այլ վայրեր հաստատուած հայ գաղութները ձեռք բերած են
 տնտեսական եւ _____ որոշ մակարդակ:
 Բացուած են հայկական _____:
 Սկսած է հին _____ հաւաքումը եւ անոնց մէջէն
 հին, դասական հայերէնի՝ _____
 ուսումնասիրութիւնը: Կազմուած են _____
 Սկսած են _____՝ մանաւանդ եւրոպական
 դասական գործերու: Անոնցմէ ներշնչուած՝ գրուած են
 _____ Երկեր, գրաբարով: Հայ
 _____ գործիչներ աշխատած են
 _____ տարածելու համար:

- Ե- Գրականութիւնը
- Մշակութային
- Տպարաններ
- Ձեռագիրներու
- Գրաբարի

Բառարաններ
Թարգմանություններ
Գրական
Մտաւորական
Լուսաւորութիւն

2 ՆԻԻԹԻ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

Պատկերներս դրեր եմ արդէն մեծ սրահին պատերուն վրայ: Ամբողջ օրեր փակուած կը մնամ այդ սրահին մէջ ու կը նայիմ երբեմն քննադատի խիստ աչքով, երբեմն յուսահատելով եւ երբեմն ալ հիանալով: Ես ուրիշ բան ընել կ'ուզէի եւ ուրիշ բան կար անշուշտ իմ հոգւոյս մէջ: Իմ մէջ կար լոյս, զուարթութիւն ու կեանք, այլ սակայն իմ բոլոր պատկերներս քողարկուած են մշուշով: Իմ հայրենի լուսավառ երկրին արեւը չէ ծագած տակաւին այն գործերուն մէջ, որ արտադրեր եմ, բայց եւ կը զգամ որ գալիք գործերու մէջ այդ մշուշը պիտի փարատի ու իմ արեւս պիտի ծագի:

Դժուար է բացատրել այն մտորումները, որոնցմէ անցեր եմ եւ յանգեր այս հետեւանքին: Կարծեմ իմ կարօտս ու իմ հայրենաբաղձութիւնս իսկ է այդ մշուշը ու այդ տրտմութիւնը, որ իր կնիքը դրեր է նաեւ իմ նկարագրիս վրայ: Ես ինքզինքս փնտռեր

եմ շարունակ ու տանջուեր եմ փնտռելով, ու իմ հոգեկան գալարումներս դրոշմուած են իմ գործերուս մէջ:

Պիտի հասկնա՞ն զիս, գոնէ պիտի գտնուի՞ մէկը, որ իր ճիշդ արժէքով գնահատէ կամ քննադատէ գործս: Պիտի հասկնա՞ն գոնէ այսքանը՝ որ իմ թերութիւններս դիպուածի կամ անփութութեան արդիւնք չեն, այլ որոշ անյաղթելի տրամադրութեան հետեւանք:

Այս առաւօտ երբ արելը պայծառ կերպով ծագեցաւ ու իր լոյսովը ողողեց ամէն ինչ, իմ պատկերներս երեւցան գունատ եւ գուրկ այն յուզումնականութենէն, որ այնքան հաղորդական կը համարէին բարեկամներս: Բայց երեկոյեան վարդագոյն մշուշին մէջ անոնք վերստացան իրենց արժէքը, ու երկար ատեն մնացի նստած անոնց դէմ մտածելով եւ երազելով: Այդ պահուն սփոփուած զգացի ինքզինքս եւ վստահութեամբ սկսայ նայիլ ու նոյնիսկ հետզհետէ հիանալ: Այս իրիկուան հոգիս համընթաց է այն վիճակներուն հետ, որ ծնունդ տուին այդ նկարներուն: Թերեւս անոնց իրական արժանիքին վրայ կ'աւելցնեմ իմ յատուկ տրամադրութիւնս, մտքովս կ'ամբողջացնեմ զանոնք:

Զապէլ Եսայեան <<Հոգիս Աքսորեալ>>

Ա- Ինչպիսի՞ զգացումներով կը դիտէ հեղինակը իր նկարները:
Իր խօսքերէն երկու (2) հատ գրեցէք՝ հաստատելու համար ձեր ըսածը: / 7 նիշ/

2 Ա -Կը դիտէ իր նկարները քննադատի խիստ աչքերով՝ երբեմն յուսահատելով եւ երբեմն ալ հիանալով:

-Ես ուրիշ բան ընել կ' ուզէի եւ ուրիշ բան կար անշուշտ իմ հոգւոյս մէջ:

-Իմ մէջ կար լոյս, զուարթութիւն ու կեանք, այլ սակայն իմ բոլոր պատկերներս քողարկուած են մշուշով:

/ 5 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ- Հայրենիքի հետ կապուած զգացումներ ունէ՞ր նկարելու ատեն: Հաստատեցէք ձեր խօսքը իր մտածումը գրելով: / 7 նիշ/

Բ- -Այո, հեղինակը ունէր Հայրենիքի հետ կապուած զգացումներ:

-Իմ հայրենի լուսավառ երկրին արելը չէ ծագած տակաւին այն գործերուն մէջ, որ արտադրեր եմ, բայց եւ կը զգամ որ գալիք գործերու մէջ այդ մշուշը պիտի փարատի եւ իմ արեւս պիտի ծագի:

/ 5 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ- Հեղինակը Հայրենիքի հանդեպ կարօտ ունի^օ: Հատուածէն գտէք եւ գրեցէք այն մասը որ կը հաստատէ ձեր խօսքը: /7 նիշ/

Գ -Այո, ունի կարօտ Հայրենիքին հանդեպ:

-Կարծես իմ կարօտս ու իմ հայրենաբաղձութիւնս իսկ է այդ մշուշը ու այդ տրտմութիւնը, որ իր կնիքը դրեր է նաեւ իմ նկարագրիս վրայ:

/ 5 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ- Ի՞նչ է հեղինակին որպէս նկարիչ բուն մտահոգութիւնը: Անոր հոգեվիճակը ներկայացուցէք իր խօսքերով: / 6 նիշ/

Դ -Իր մտահոգութիւնն է եթէ պիտի հասկնան զինք:

-Գոնէ պիտի գտնուի^օ մէկը, որ իր ճիշդ արժէքով գնահատէ կամ քննադատէ գործս:

/ 4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Ե- Այս հատուածին համար գրեցէք երեք (3) տարբեր վերնագիրներ: / 3 նիշ/

Ե- -Իւրովի որոշում

/ 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ /40 նիշ/

Մարդը եւ բնութիւնը ունին սերտ կապ եւ փոխազդեցութիւն:
Գրականութիւնը եւ նկարչութիւնը նոյնպէս ունին յատուկ կապ եւ փոխազդեցութիւն: Այվագովսկիի հերեւեալ նկարէն ներշնչուելով զարգացուցէք ձեր մտածումները եւ զգացումները: / շուրջ 200 բառ/



3 Տրուած նիւթով կ'ակնկալուի զարգացնել իրենց մտածումները եւ զգացումները:

/ 12 նիշ բովանդակութիւն 10 նիշ կառուցուածք 12 նիշ արտայայտութիւն 6 նիշ ուղղագրութիւն իւրաքանչիւր 5 ուղղագրական սխալի համար պիտի պակսի 1 նիշ/

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրին:

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն